ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Գոգհովիտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի **<<հայոց լեզու և գրականություն>> առարկայի ուսուցչի** (17 ժամ) թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝ դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), - անձը հաստատող փաստաթուղթ, - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում), - ինքնակենսագրություն (Ձև 5), - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ, - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում), որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **փետրվարի 22-ից** մինչև **մարտի 07-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա **մարտի 15-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Շիրակի մարզի Գոգհովիտի միջնակարգ դպրոցում.

հասցե՝ գ. Գոգհովիտ, փ. 1, շ. 18:

Տեղեկությունների համար զանգահարել (093) 20-75-94 հեռախոսահամարով:

«Գոգհովիտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն/ /Ն.Գրիգորյան